ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 08.12.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/32

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.07.2017թ. թիվ 03/27-1/13316-17 գրությամբ «Վանգաս» ՍՊԸ-ին և «Առևտրի տուն «Ուզբեկտկանի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 07.07.2017թ. թիվ ԴՎԱ/2185 գրության հիման վրա, 20.07.2017թ. թիվ 03/27-1/13316-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Վանգաս» ՍՊԸ-ին և «Առևտրի տուն «Ուզբեկտկանի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **«Վանգաս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը**

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 21.07.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/13363-17 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «Վանգաս» ՍՊԸ-ին և «Առևտրի տուն «Ուզբեկտկանի» ՍՊԸ-ին:

«Առևտրի տուն «Ուզբեկտկանի» ՍՊԸ-ն Խորհրդին դիրքորոշում չի ներկայացրել:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ «Վանգաս» ՍՊԸ-ն 26.07.2017թ. Խորհրդին հայտնել է, որ ՍՑ-ԱՄ-2017/32 պաշտոնական ընթացակարգը հիմնված է այն հանգամանքի վրա, որ «Վանգաս» ՍՊԸ-ն ԳԲԽ-ԷՍ-2017/10 գործով բողոքարկել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40» ծածկագրով ընթացակարգի 5-րդ և 9-րդ չափաբաժիններով հաղթող ճանաչվելու գնահատող հանձնաժողովի որոշումը և ԳԲԽ-ԷՍ-2017/10 բողոքը քննող Խորհուրդը մերժել է բողոքը:

Ընկերությունը հայտնել է նաև, որ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում քննության է առնվում թիվ ԵԱՔԴ/2539/02/17 քաղաքացիական գործն ըստ հայցի «Վանգաս» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի, երրորդ անձինք՝ ՀՀ պաշտպանության նախարարության, «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի, «Կոտայքլոշ» ԲԲԸ-ի թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/10 որոշումն անվավեր ճանաչելու մասին:

Այսինքն՝ վիճարկվում է Խորհրդի որոշումը, ինչպես նաև այդ գործի շրջանակներում կիրառվել է հայցի ապահովում՝ արգելելով մասնակիցներին մրցույթի շրջանակներում կատարելո որոշակի գործողություն:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը միջնորդել է Խորհրդին կասեցնել ՍՑ-ԱՄ-2017/32 պաշտոնական ընթացակարգի քննությունը, քանի որ դատական կարգով վիճարկվում է պաշտոնական ընթացակարգի համար հիմք հանդիսացող որոշումը:

«Վանգաս» ՍՊԸ-ն և «Առևտրի տուն «Ուզբեկտկանի» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 28.07.2017թ. ժամը 11:15-ին նիստի վերաբերյալ, «Վանգաս» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչը ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է 26.07.2017թ. գրությամբ Խորհրդին հայտնած դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 07.07.2017թ. թիվ ԴՎԱ/2185 գրությամբ հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի 5-րդ, 6-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով գնահատող հանձնաժողովի կողմից «Վանգաս» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: 2017թ. ապրիլի 13-ին Ընկերության էլեկտրոնային փոստին ծանուցում է ուղարկվել հրավերով պահանջվող որակավորման պահանջներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու համար: Հրավերով նմանատիպ են սահմանվել անկողնային պարագաների և սպիտակեղենի մատակարարման պայմանագիրը: «Վանգաս» ՍՊԸ-ի կողմից մի քանի նմանատիպ պայմանագրերի հետ միասին ներկայացվել է նաև 2015թ. փետրվարի 16-ին կնքված թիվ 1-2015 կտորի առուվաճառքի պայմանագիրը, որը հանձնաժողովի որոշմամբ չի համարվել որպես նմանատիպ պայմանագիր և դրա արդյունքում Ընկերության կողմից ներկայացված նմանատիպ պայմանագրերի ընդհանուր գումարը պակաս էր 5-րդ և 9-րդ չափաբաժիններով ներկայացված գնային առաջարկների 50 տոկոսից: Ընկերությանը ծանուցում է ուղարկվել սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը, սակայն սահմանված ժամկետում չի շտկվել անհամապատասխանությունը, որի հիման վրա էլ հանձնաժողովը 5-րդ և 9-րդ չափաբաժիններով մերժել է Ընկերության հայտը:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ «Վանգաս» ՍՊԸ-ն հանձնաժողովի որոշումը բողոքարկել է ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդ, որն էլ 16.06.2017թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/10 որոշմամբ մերժել է ներկայացրած բողոքը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 28.07.2017թ. ժամը 11:15-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2017/32 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԱՄ-2017/32 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «Հանդերձանքի» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով՝ ի թիվս այլ մասնակիցների, Ընթացակարգի թիվ 5-րդ և 9-րդ չափաբաժինների մասով հայտեր են ներկայացրել «Վանգաս» և «Առևտրի տուն» «Ուզբեկտկանի» ՍՊԸ-ների կոնսորցիումը, «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, «Կոտայքկոշ» ԲԲԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի մասով նմանատիպ են համարվել «Անկողնային պարագաների և սպիտակեղենի» մատակարարման պայմանագրերը (հրավերի 2-րդ բաժին 2.3 կետ):

3. «Վանգաս» ՍՊԸ-ն և Առևտրի տուն» «Ուզբեկտկանի» ՍՊԸ-ն հայտի N 3.1 հավելվածով՝ մասնագիտական փորձառության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել են, որ ***«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել են ՀՀ ՊՆ կարիքների համար ապրանքի գնման N ՇՀԱՊՁԲ-7/21-4 պայմանագիրը, առուվաճառքի պայմանագիր 1-2015-ը, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 41 440 000 ՀՀ դրամ և պարտավորվում են սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:***

4. «Վանգաս» ՍՊԸ-ն Ընթացակարգի քարտուղարի կողմից ծանուցվել է այն մասին, որ գնահատող հանձնաժողովի որոշմամբ Ընթացակարգի թիվ 5-րդ, 6-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով Ընկերությունը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

5. Հրավերով սահմանված կարգով Ընկերության կողմից ներկայացվել են որակավորման «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հավաստող փաստաթղթեր, մասնավորապես, տվյալ գնման ընթացակարգի հրավերով նախատեսված գնման առարկայի նմանատիպ ապրանքների /կտոր բամբակյա դոշակի երես, կտոր բամբակյա նապերնիկ, կտոր բամբակյա սպիտակեցված/ մատակարարման պայմանագրեր ընդհանուր 26.633.780 ՀՀ դրամ արժեքով:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 26.04.2017թ. թիվ 4 արձանագրությամբ արձանագրել է, որ «Վանգաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նմանատիպ պայմանագրերի ընդհանուր գումարը պակաս է 5-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկների 50 տոկոսից: «Վանգաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 2015թ. փետրվարի 16-ին կնքված 1-2015 առուվաճառքի պայմանագիրը չի համարվում որպես նմանատիպ պայմանագիր, ուստի հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և ծանուցել Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

7. Նույն արձանագրությամբ կայացրած որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

8. «Վանգաս» ՍՊԸ-ն հանձնաժողովի որոշումը բողոքարկել է ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդ, որն էլ 16.06.2017թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/10 որոշմամբ մերժել է ներկայացրած բողոքը՝ այն հիմնավորմամբ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ մերժելով Ընկերության հայտը 5-րդ և 9-րդ չափաբաժինների մասով, քանի որ Ընկերության կողմից նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) չեն համապատասխանում Կարգի 65-րդ կետի 1)-ին ենթակետով սահմանված պահանջներին:

9. Ընկերությունը ՍՑ-ԱՄ-2017/32 ծածկագրով պաշտոնական ընթացակարգի շրջանակներում Խորհրդին հայտնել է, որ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում քննության է առնվում թիվ ԵԱՔԴ/2539/02/17 քաղաքացիական գործն ըստ հայցի «Վանգաս» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի, երրորդ անձինք՝ ՀՀ պաշտպանության

նախարարության, «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի, «Կոտայքլոշ» ԲԲԸ-ի թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/10 որոշումն անվավեր ճանաչելու մասին:

5. **<u>Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>**

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.07.2017թ. թիվ 03/27-1/13316-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 07.07.2017թ. թիվ ԴՎԱ/2185 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Վանգաս» ՍՊԸ-ի 26.07.2017թ. գրությունը, ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 16.06.2017թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/10 որոշումը և Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից 12 հոկտեմբերի 2017թ. կայացրած թիվ ԵԱՔԴ/2539/02/17 վճիռը՝ հայտնում է հետևյալը.

2010թ. դեկտեմբերի 22-ի «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:***

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական փորձառություն:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի և 6-րդ մասի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 65-րդ կետի 1-ին, 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

3) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման

արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Կարգի 69-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «Հանդերձանքի» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով՝ ի թիվս այլ մասնակիցների, Ընթացակարգի թիվ 5-րդ և 9-րդ չափաբաժինների մասով հայտեր են ներկայացրել «Վանգաս» և «Առևտրի տուն» «Ուզբեկտկանի» ՍՊԸ-ների կոնսորցիումը, «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, «Կոտայքկոշ» ԲԲԸ-ն:

Ընթացակարգի հրավերի համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի մասով նմանատիպ են համարվել «Անկողնային պարագաների և սպիտակեղենի» մատակարարման պայմանագրերը (հրավերի 2-րդ բաժին 2.3 կետ):

«Վանգաս» ՍՊԸ-ն և Առևտրի տուն» «Ուզբեկտկանի» ՍՊԸ-ն հայտի N 3.1 հավելվածով՝ մասնագիտական փորձառության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել են, որ ***«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել են ՀՀ ՊՆ կարիքների համար ապրանքի գնման N ՇՀԱՊՁԲ-7/21-4 պայմանագիրը, առուվաճառքի պայմանագիր 1-2015-ը, որոնց ընդհանուր արժեքը***

կազմել է 41 440 000 ՀՀ դրամ և պարտավորվում են սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

«Վանգաս» ՍՊԸ-ն Ընթացակարգի քարտուղարի կողմից ծանուցվել է այն մասին, որ գնահատող հանձնաժողովի որոշմամբ Ընթացակարգի թիվ 5-րդ, 6-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով Ընկերությունը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 26.04.2017թ. թիվ 4 արձանագրությամբ արձանագրել է, որ «Վանգաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նմանատիպ պայմանագրերի ընդհանուր գումարը պակաս է 5-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկների 50 տոկոսից: «Վանգաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 2015թ. փետրվարի 16-ին կնքված 1-2015 առուվաճառքի պայմանագիրը չի համարվում որպես նմանատիպ պայմանագիր, ուստի հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և ծանուցել Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Նույն արձանագրությամբ կայացրած որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Խորհուրդն արձանագրում է, որ «Վանգաս» ՍՊԸ-ն հանձնաժողովի որոշումը 30.05.2017թ. բողոքարկել է ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդ, որն էլ 16.06.2017թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/10 որոշմամբ մերժել է ներկայացրած բողոքը՝ այն հիմնավորմամբ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ մերժելով Ընկերության հայտը 5-րդ և 9-րդ չափաբաժինների մասով, քանի որ Ընկերության կողմից նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) չեն համապատասխանում Կարգի 65-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջներին:

Ընկերությունը ՍՑ-ԱՄ-2017/32 ծածկագրով պաշտոնական ընթացակարգի շրջանակներում Խորհրդին հայտնել է, որ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում քննության է առնվում թիվ ԵԱՔԴ/2539/02/17 քաղաքացիական գործն ըստ հայցի «Վանգաս» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի, երրորդ անձինք՝ ՀՀ պաշտպանության

նախարարության, «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի, «Կոտայքոշ» ԲԲԸ-ի թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/10 որոշումն անվավեր ճանաչելու մասին:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդի կողմից 16.06.2017թ. կայացված թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/10 որոշմամբ «Վանգաս» ՍՊ ընկերության կողմից ներկայացրած բողոքը մերժվել էր այն պատճառաբանությամբ, որ «Վանգաս» ՍՊ ընկերությունը չի բավարարել Ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին, մասնավորապես՝ չի ունեցել պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար Հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն, մինչդեռ՝ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 12 հոկտեմբերի 2017թ.-ին կայացրած թիվ ԵԱՔԴ/2539/02/17 վճռով եկել է այն եզրահանգման, որ «Վանգաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 16.02.2015թ. կնքված թիվ 1-2015 առքուվաճառքի պայմանագիրը դասվում է Ընթացակարգի հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբում, այսինքն՝ նշված գործարքները համարվում են համանման (նմանատիպ), այսինքն՝ Ընկերությունը ունեցել է Հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Արդյունքում Դատարանը կայացրած վճռով գտել է, որ հայցվորի պահանջը հիմնավոր է և պետք է անվավեր ճանաչել Գնումների բողոքարկման խորհրդի՝ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40» ծածկագրով «Հանդերձանքի» գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2017 թվականի ապրիլի 26-ի «Վանգաս» ՍՊ ընկերության հայտը մերժելու թիվ 1.1 և Ընթացակարգի 9-րդ չափաբաժնով «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊ ընկերությանը, 5-րդ չափաբաժնով «Կոտայքկոշ» ԲԲ ընկերությանն ընտրված մասնակիցներ ճանաչելու որոշումների դեմ բերված բողոքը մերժելու մասին, 16.06.2017 թվականի թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/10 որոշումը:

Այսպես, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե ***<u>հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:</u>***

Վերոգրյալ փաստերով պայմանավորված և հիմք ընդունելով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից 12 հոկտեմբերի 2017թ-ին կայացրած թիվ ԵԱՔԴ/2539/02/17 վճիռը՝ Խորհուրդն արձանագրում է, որ «Վանգաս» և «Առևտրի տուն «Ուզբեկտկանի»» ՍՊԸ-ների կոնսորցիումի կողմից հայտի թիվ 3.1 հավելվածով ներկայացված հայտարարությունը չի հանդիսանում 2010թ. դեկտեմբերի 22-ի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված կեղծ տվյալի ներկայացում, հետևաբար Խորհուրդը գտնում է, որ «Վանգաս» և «Առևտրի տուն «Ուզբեկտկանի»» ՍՊԸ-ների կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 20.07.2017թ. թիվ 03/27-1/13316-17 գրությամբ «Վանգաս» (ՀՎՀՀ՝ 90032472) և «Առևտրի տուն «Ուզբեկտկանի»» (ՀՎՀՀ՝ 03528866) ՍՊԸ-ների կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ